

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 24

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

19.09. 2016թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

Ա. Դարբինյան - մարզպետի տեղակալ

Հ. Թադևոսյանը - մարզպետի տեղակալ

Ն. Սարգսյանը - աշխատակազմի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար

Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ

Ա. Բեջանյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Վ. Գևորգյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա.

Օհանյանը, Լ. Բերոյանը, Ա. Սահակյանը, Ս. Ղուբաթյանը, Ա. Աղլոյանը, Ս. Գրիգորյանը, Ս.Խեչումյանը, Հ.

Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Լ. Ասլանյանը, Ա. Մանուկյանը - մարզպետի խորհրդականներ

Ա. Սարգսյանը , Տ. Էվինյանը - մարզպետի օգնականներ

Օր ա կ ա ր գ ու մ`

- 1.Անկախության 25- ամյակին նվիրված միջոցառումների մասին:
/Ա.Նալբանդյան/
2. Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ,, Բեռնաթափում,, ծրագրի մասին:
/Ջեկ. Ն.Սարգսյան/
3. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման մասին :
/Ջեկ. Ա. Բեջանյան/
- 4.,,Դիակոնիա,, բարեգործական հիմնադրամի կողմից առողջապահության ոլորտում կատարված աշխատանքների մասին:
/Ջեկ.Ս.Լամբարյան/
- 5.Մարզում իրականացվող ճանապարհաշինական աշխատանքների մասին:
/ Ջեկ. Վ. Գևորգյան/
- 6.ՏԻՄ ընտրությունների ընթացքի մասին տեղեկատվություն:
/ Ջեկ. Դ. Մանուչարյան/
- 7.,,Ձեռք մեկնիր եղբորդ,, ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին:
/ Ջեկ. Ս Խեչումյան/
- 8.Ներդրումային ծրագրերի մասին տեղեկատվություն:
/ Ջեկ. Հ. Մկրտչյան/
- 9.Պարարտանյութի և սերմացուների գումարների հավաքագրման մասին:
/ Ջեկ. Գ. Հակոբյան/
10. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Ակտիվ մասնակցություն ցուցաբերել Լոռու մարզպետարանի և Գուգարաց թեմի նախաձեռնությամբ իրականացվող «Ձեռք մեկնիր եղբորդ» ծրագրին:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին, զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Մինչև հոկտեմբերի 15-ը ներկայացնել առաջարկություններ զբոսաշրջության, գյուղատնտեսության, կրթության և ֆրանկոֆոնիայի վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Պապոյանին, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Սեփական եկամուտների հավաքագրման տվյալները տրամադրել փոխմարզպետներին և համատեղ միջոցներ ձեռնարկել սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի բարձրացման /այդ թվում վարձակալության վճարների հավաքագրման / ուղղությամբ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Զանազյանին, աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին՝

Անհրաժեշտ հսկողություն սահմանել Ստեփանավան-Օձուն ճանապարհահատվածի հարակից տարածքներում ապօրինի շինությունները և զավթումները չթույլատրելու նպատակով, այդ հարցերով նաև գրություններ ուղարկել նշված տարածքի համայնքների ղեկավարներին և ճանապարհաշինական կազմակերպություններին:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Հ. Մկրտչյանին՝

Լոռու մարզում իրականացվող ներդրումային ծրագրերի վերաբերյալ անհրաժեշտ լուսաբանումներ ներկայացնել զանգվածային լրատվամիջոցներով:

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՄԱՆՈՒՇԱՐՅԱՆ

Արձ. Ս.Մակարյան

Հեռ. 0322/4- 32- 99/